ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/76

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.12.2017թ. թիվ 26-3/23707-17 գրությամբ «Մակսիմ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 01260794/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.12.2017թ. թիվ ԴՎԱ/4595 գրության հիման վրա, 19.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Մակսիմ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.12.2017թ. թիվ ԴՎԱ/4595 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 10.04.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-3/4-1 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. նոյեմբերի 01-ից միակողմանի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ 2 հատ հատուկ լուսանկարչական խցիկներ (տեսախցիկ պրոֆեսիոնալ) և 2 հատ հատուկ լուսանկարչական խցիկներ (թվային պրոֆեսիոնալ ֆոտոապարատ) ապրանքատեսակների մասով»:

Միաժամանակ Պատվիրատուն տեղեկացրել է, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 11.12.2017թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնայի փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«Մակսիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը դիմել է «Մակսիմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.12.2017թ. թիվ 26-3/23707-17 գրությամբ Խորհրդում

նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/76 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 19.12.2017թ. թիվ 26-3/23707-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.12.2017թ. թիվ ԴՎԱ/4595 գրությունը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ի «Մակսիմ» ՍՊԸ-ին ուղղված 11.12.2017թ. թիվ ԴՎԱ/4534 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 10.04.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-3/4-1 ծածկագրով գնման պայմանագիրը, Պատվիրատուի կարծիքը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 10.04.2017թ. կնքվել է N ՇՀԱՊՁԲ-3/4-1 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Մակսիմ» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N2), Գնորդին կամ նրա կոմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստցող) մատակարարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3):
- 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

• 3.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Պայամանագրի Հավելված 1-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. 3-րդ եռամսյակում մատակարարել թվով 4 հատուկ լուսանկարչական խցիկներ՝ 2 պրոֆեսիոնալ տեսախցիկ և 2 թվային պրոֆեսիոնալ ֆոտոապարատ:

Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 4,195,800 ՀՀ դրամ:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետը 20.10.2017թ.զեկուցագրով հայտնել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին, որ Ընկերության կողմից ստացված՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև կնքված ՇՀԱՊՁԲ-3/4-1 պայմանագիրը լրիվ լուծելու առաջարկը Պատվիրատուի կողմից քննարկվել է և համարվել է անհիմն և անընդունելի: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուշացման օրերի թիվը 19.10.2017թ. կազմում է 19 օր, ինչպես նաև այն, որ Ընկերությունը փաստացի դադարեցրել է ապրանքների մատակարարումը, նույն զեկուցագրով առաջարկվել է ՇՀԱՊՁԲ-3/4-1 պայմանագրի մասով չմատակարարված ապրանքատեսակների լուծարման գործընթացը սկսել՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում (30 օրից ավել ուշացում):

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. նոյեմբերի 1-ից միակողմանի լրիվ լուծել է 10.04.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-3/4-1 գնման պայմանագիրը (2 չափաբաժինների մասով):

Պատվիրատուն 11.12.2017թ. թիվ ԴՎԱ/4534 գրությամբ դիմել է «Մակսիմ» ՍՊԸ-ին՝ տեղեկացնելով, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետերի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. նոյեմբերի 1-ից միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ միաժամանակ առաջարկելով Ընկերությանը նույն ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում վճարել Պայմանագրով նախատեսված տույժը և պայմանագրի կատարման ապահովումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Խորհուրդն արձանագրում է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ն 10.04.2017թ. կնքել է ՀՀ պաշտպանության նախարարության հետ «ՇՀԱՊՁԲ-3/4-1» ծածկագրով լուսանկարչական տեսախցիկների մատակարարման պայմանագիր, սակայն չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լրիվ լուծմանը:

Խորհուրդը գտնում է, որ պայմանագրով նախատեսված ապրանքը սահմանված ժամկետում չմատակարարելով՝ Ընկերությունը խախտել է 10.04.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-3/4-1 գնման պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը՝ նույն պայմանագրի 2 չափաբաժինների մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի՝

- 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չոքունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման

խորհրդում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով(...):

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 125-րդ կետի (այսուհետ՝ նաև Կարգ) 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության հետ 10.04.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-3/4-1 գնման պայմանագրի շրջանակում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում՝ խախտելով պայմանագրով ստանձնած պարտավորությունը 2 չափաբաժինների մասով, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, ինչից հետո մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-

ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին, որպիսի փաստն արձանագրվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.10.2017թ. թիվ 03/26-3/18705-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում «Մակսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված փաստաթղթերի հիմքում:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ համաձայն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ֆինանսական վարչության կողմից 30.11.2017թ. ներկայացված զեկուցագրի՝ ՀՀ ՊՆ և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 10.04.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-3/4-1 ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից վճարման ենթակա տույժերի չափը կազմել է 65,065 ՀՀ դրամ, իսկ պայմանագրի կատարման ապահովման (տուժանքի) չափը՝ 420,000 ՀՀ դրամ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ին՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերը, որոնք են՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված Ընկերությանը վերագրվող խախտման՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունը 2 չափաբաժինների մասով խախտելու, ինչպես նաև խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում վերջինիս կողմից գնման գործընթացին մասնակցության հայտ ներկայացնելու փաստերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով, Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.12.2017թ. «Մակսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Մակսիմ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ վեց ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ